Կարգապահական գործ թիվ ԿԳ-24182

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓԱՍՏԱԲԱՆ ԷԴԳԱՐ ԱՐՄԵՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Արաքս Վարդանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան **Էդգար Հակոբյանի, դիմող Անի Մկրտչյանի,**

քննության առնելով փաստաբան **Էդգար Արմենի Հակոբյանին (այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2177) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Անի Մկրտչյանը **(այսուհետև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ Պալատ),** հայտնել է, որ թիվ ԵԴ2/24791/02/23 քաղաքացիական գործով հայցվոր Դավիթ Պապիկյանի շահերը ներկայացնում է փաստաբան Էդգար Հակոբյանը:

Դիմողը, ներկայացնելով իր և Դավիթ Պապիկյանի միջև ամուսնալուծության վեճի մանրամասները, հայտնել է, որ նշված գործի շրջանակներում Դավիթ Պապիկյանը գործում

թիվ ԿԳ-24182-2-Ա
16.04.2025թ.

է փաստաբան Էդգար Հակոբյանի հորդորներով, ինչի արդյունքում Դիմողի, որպես գործով պատասխանողի համար, առաջանում են տարատեսակ խնդիրներ:

Դիմողի պնդմամբ, թիվ ԵԴ2/24791/02/23 քաղաքացիական գործով 07.11.2024 թվականի դատական նիստի ընթացքում փաստաբան Էդգար Հակոբյանը կատարել է «...նկատի ունենալով, որ պատասխանող Անի Մկրտչյանը Արաբկիր նստավայրի դատարանի գրասենյակի աշխատակից է և երկու կողմերի միջև տարբեր քաղաքացիական գործերով մեզ հասնում են տեղեկություններ, որ տարբեր դատավորներ «արջի ծառայություն են մատուցում» Անի Մկրտչյանին, որով պայմանավորված նաև եղել են դատական նիստերից դուրս քննարկումներ...» արտահայտությունները:

Դիմողը հավելել է, որ Դատարանը նշվածի արդյունքում «դատավորները «արջի ծառայություն են մատուցում»» արտահայտությունը որակել է անհարգալից վերաբերմունք Դատարանի նկատմամբ:

Դիմողը հայտնել է, որ դատական նիստերից դուրս փաստաբան Էդգար Հակոբյանը Արաբկիր նստավայրի դատարանի տարբեր դահլիճներում բազմիցս մոտեցել է դատական նիստերի քարտուղարներին՝ տարածելով Դիմողի վերաբերյալ որոշակի տեղեկություններ՝ մասնավորապես, «ճանաչու՞մ եք Անիին ձեր գրասենյակում աշխատող ... ինքը շատ վատ աղջիկա, դրա համար էլ իմ հայցվոր Դավիթը բաժանվում է իրենից ... համ էլ իրա ընտանիքում բոլորը մեղադրյալներ են...»:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 17.02.2025թ. Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Էդգար Արմենի Հակոբյանի **(այսուհետև՝ Փաստաբան)** առաջարկվել է ներկայացնել բացատրություն Անի Մկրտչյանի դիմումի վերաբերյալ:

Սակայն Փաստաբանը բացատրություն չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 17.02.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի

5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 10.01.2025թ. ներկայացրած բացատրությամբ մանրամասն նկարագրել է Դիմողի հետ կապված թե՛ ամուսնաընտանեկան վեճի, և թե՛ այդ վեճից առաջացած քրեական վարույթի մանրամասները:

Փաստաբանն առանձին-առանձին անդրադարձել է Դիմողի պնդումներին՝ ամբողջությամբ ժխտելով դրանք:

Դիմողը, Պալատ բողոք ներկայացնելով, փորձ է կատարել ազդել Փաստաբանի՝ որպես Դավիթ Պապիկյանի ներկայացուցչի վրա, որպեսզի Փաստաբանը դադարեցնի կամ պատշաճ չիրականացնի իր վստահորդի շահերը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 27.12.2024թ. թիվ 433-Ա/ԿԳ-24182 որոշմամբ փաստաբան Էդգար Հակոբյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև՝ Կանոնագիրք)** 2.2.2 ենթակետերի և 4.1 կետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

07.01.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Ծովինար Քուրքչյանին (**այսուհետև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 07.03.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել հետևյալ փաստերը՝

1. Դիմողը և Փաստաբան Էդգար Հակոբյանի վստահորդ՝ Դավիթ Պապիկյանը հանդիսանում են թիվ ԵԴ2/24791/02/23 քաղաքացիական գործով դատավարության մասնակիցներ: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես նաև թիվ ԵԴ2/24791/02/23 քաղաքացիական գործով «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

2. Թիվ ԵԴ2/24791/02/23 քաղաքացիական գործով 07.11.2024 թվականի դատական նիստի ընթացքում փաստաբան Էդգար Հակոբյանը կատարել է «*...նկատի ունենալով, որ*

պատասխանող Անի Մկրտչյանը Արաբկիր նստավայրի դատարանի գրասենյակի աշխատակից է և երկու կողմերի միջև տարբեր քաղաքացիական գործերով մեզ հասնում են տեղեկություններ, որ ***տարբեր դատավորներ «արջի ծառայություն են մատուցում» Անի Մկրտչյանին****, որով պայմանավորված նաև եղել են դատական նիստերից դուրս քննարկումներ...»* արտահայտությունները: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԵԴ2/24791/02/23 քաղաքացիական գործով 07.11.2024 թվականի դատական նիստի ձայնագրությունից, մասնավորապես 2-րդ ձայնագրության 21-րդ վայրկյանից սկսած:*

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 07.03.2025թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 16.04.2025թ. ժամը 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Դիմողը և Փաստաբան Էդգար Հակոբյանի վստահորդ՝ Դավիթ Պապիկյանը հանդիսանում են թիվ ԵԴ2/24791/02/23 քաղաքացիական գործով դատավարության մասնակիցներ:

2. Թիվ ԵԴ2/24791/02/23 քաղաքացիական գործով 07.11.2024 թվականի դատական նիստի ընթացքում փաստաբան Էդգար Հակոբյանը կատարել է *«...նկատի ունենալով, որ պատասխանող Անի Մկրտչյանը Արաբկիր նստավայրի դատարանի գրասենյակի աշխատակից է և երկու կողմերի միջև տարբեր քաղաքացիական գործերով մեզ հասնում են տեղեկություններ, որ* ***տարբեր դատավորներ «արջի ծառայություն են մատուցում» Անի Մկրտչյանին****, որով պայմանավորված նաև եղել են դատական նիստերից դուրս քննարկումներ...»* արտահայտությունները:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Էդգար Հակոբյանը փաստաբան է հանդիսանում 03.12.2016թ. և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 1 կարգապահական վարույթ՝ անդամավճար չվճարելու հիմքով: Նշանակված կարգապահական տույժը մարված է:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Էդգար Հակոբյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես

նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի և 4.1 կետի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

7.1 Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները:*

Կանոնագրքի 2.1 ենթակետի 3-րդ և 4-րդ պարբերությունների համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է նաև անկախ լինել իր վստահորդից:*

Իր վստահորդի շահերը ներկայացնելիս փաստաբանը պետք է զերծ մնա այնպիսի գործողություններից, որոնք փաստաբանին կարող են նույնացնել իր վստահորդի հետ: Փաստաբանի կողմից իր մասնագիտական պարտականությունների շրջանակում հոգուտ վստահորդի շահերի իրականացված գործողությունները չեն կարող համարվել վստահորդի հետ նույնացում:

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (այսուհետ՝ նաև CCBE) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ *փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը:*

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 16 (2013) կարծիքի 25-րդ կետի համաձայն՝ ... *Պրոֆեսիոնալ գործընկերների նկատմամբ հարգանքի, օրենքի գերակայության և արդարադատության արդար իրականացման հարգանքի՝ Փաստաբանների և իրավաբանների միությունների եվրոպական խորհրդի «Եվրոպայում իրավաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների մասին» խարտիայում սահմանված սկզբունքներով պահանջվում է խուսափել գործընկերների, առանձին դատավորների և դատարանի ընթացակարգերի ու որոշումների վիրավորական քննադատությունից:*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, փաստաբանի վրա դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ՝ հաշվի առնելով, որ փաստաբանի օրինակելի վարքագծի կարևորագույն դրսևորումներից է իր գործընկերների և այլ անձանց անձի, արժանապատվության և համբավի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելը,

միջանձնային քաղաքավարի վարվեցողությունը: Իր հերթին Կանոնագրքի 2.2.2 ենթակետով փաստաբանի վրա դրվում է նեգատիվ պարտականություն խուսափելու այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Ընդ որում, նկատի ունենալով փաստաբանի անկախության սկզբունքի ապահովման կարևորությունը, Կանոնագիրքը նախատեսել է նաև այնպիսի երաշխիք, որն ուղղված է վստահորդին և փաստաբանին չնույնացնելուն, որը սակայն կապված է բացառապես հօգուտ վստահորդի օրենքով չարգելված գործողությունների կատարման հետ: Հետևապես, փաստաբանի համար նախատեսվում է առանձնահատուկ պարտականություն՝ զերծ մնալ այնպիսի գործողությունների կատարումից, որոնց կատարմամբ, անկախ դրանց իրավաչափության աստիճանից, փաստաբանը կարող է նույնացվել իր վստահորդի հետ:

Տվյալ պարագայում Փաստաբանը 07.11.2024 թվականի հերթական դատական նիստի ընթացքում օգտագործել է ոչ պատշաճ և փաստաբանին ոչ հարիր արտահայտություններ, մասնավորապես՝ փաստաբան Էդգար Հակոբյանը արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. *«...նկատի ունենալով, որ պատասխանող Անի Մկրտչյանը Արաբկիր նստավայրի դատարանի գրասենյակի աշխատակից է և երկու կողմերի միջև տարբեր քաղաքացիական գործերով մեզ հասնում են տեղեկություններ, որ* ***տարբեր դատավորներ «արջի ծառայություն են մատուցում» Անի Մկրտչյանին****, որով պայմանավորված նաև եղել են դատական նիստերից դուրս քննարկումներ...»:*

Վերոգրյալից հետևում է, որ Փաստաբանն իր վարքագծի արդյունքում կասկածի տակ է դրել փաստաբանի մասնագիտական և հանրային հեղինակությունը, ինչը հարիր չէ փաստաբանական գործունեությանը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի կողմից խախտվել են Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջները:

<u>Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման մասով.</u>

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 4.1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու*

հնարավորությունը:

Վերոգրյալից բխում է, որ վստահորդի շահերի պաշտպանությանն ուղղված գործողություններ իրականացնելիս դատավարության ընթացքում ծավալվող հարաբերություններում փաստաբանը՝ նպաստելով իրավունքի զարգացմանը, իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը և ձգտելով արդարադատության պատշաճ և իրավաչափ իրականացմանը, պետք է հարգանքով վերաբերվի դատավարության մասնակիցներին, ում հետ նա առնչվում է՝ թույլ չտալով նրանց պատիվը, արժանապատվությունը կամ համբավն արատավորող գործողություններ կամ արտահայտություններ, ինչը որևիցե կերպ չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:

Հարկ է նշել, որ սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Փաստաբանը հանդիսացել է թիվ ԵԴ2/24791/02/23 քաղաքացիական գործով Դիմողի դատավարական հակառակորդի փաստաբանը: Նշված դատական գործով 07.11.2024 թվականի հերթական դատական նիստի ընթացքում, երբ դատավոր Նելլի Հարությունյանը հանդես է եկել բացման խոսքով և փաստաբանին հնարավորություն է տվել կարծիք արտահայտելու, փաստաբան Էդգար Հակոբյանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. *«...նկատի ունենալով, որ պատասխանող Անի Մկրտչյանը Արաբկիր նստավայրի դատարանի գրասենյակի աշխատակից է և երկու կողմերի միջև տարբեր քաղաքացիական գործերով մեզ հասնում են տեղեկություններ, որ* ***տարբեր դատավորներ «արջի ծառայություն են մատուցում» Անի Մկրտչյանին****, որով պայմանավորված նաև եղել են դատական նիստերից դուրս քննարկումներ...»:*

Հանձնաժողովը ուսումնասիրության առարկա դարձնելով սույն կարգապահական գործով առանցքային ապացույցը, այն է՝ թիվ ԵԴ2/24791/02/23 քաղաքացիական գործով 07.11.2024 թվականի դատական նիստի ձայնագրությունը՝ հաստատված է համարել այն փաստը, որ Փաստաբանը կատարել է այնպիսի արտահայտություններ, որոնք թե՛ Դիմողի, թե՛ գործով դատավորի տեսանկյունից գնահատվել են որպես անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ:

Փաստաբանը կարգապահական գործով հանձնաժողովի նիստի ընթացքում բազմիցս պնդել է այն դիրքորոշումը, որ «**տարբեր դատավորներ «արջի ծառայություն են մատուցում» Անի Մկրտչյանին»** կարծիքը պատկանում է ոչ թե իրեն, այլ դատարանի տարբեր աշխատակիցներին, իսկ Փաստաբանը նիստի ընթացքում պարզապես արտահայտել է իրեն հասած տեղեկությունները: Նշվածը Փաստաբանը նաև հայտնել է դատավորին:

Այս համատեքստում, անհրաժեշտ է նշել, որ ԵԴ2/24791/02/23 քաղաքացիական գործով 07.11.2024 թվականի դատական նիստի ձայնագրությունից պարզ է դառնում, որ դատավորը նույնպես գնահատում է Փաստաբանի արտահայտությունը որպես անհարգալից վերաբերմունք: Այս առումով, դատավորը նշել է, որ հենց Փաստաբանն է առաջինն արտահայտել այս դիրքորոշումը, ուստի հենց իրեն է այն պատկանում:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստերի համադրության արդյունքում Հանձնաժողովը գնահատում է, որ Փաստաբանի արարքում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներ, այն պարզ պատճառանությամբ, որ Փաստաբանը, հանդիսանալով արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձ, ով օժտված է առավել բարձր իրավագիտակցության մակարդակով և բարոյական որակներով, պարտավոր է պահպանել վարվելակերպի կանոնները և դրսևորել հարգալից վերաբերմունք դատավորի նկատմամբ:

Տվյալ դեպքում, Փաստաբանը, արտահայտելով «...**տարբեր դատավորներ «արջի ծառայություն են մատուցում» Անի Մկրտչյանին»,** չի կարող որակվել որպես հարգալից վերաբերմունք անկախ որևէ հանգամանքից:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը պայմանավորված իր հատուկ կարգավիճակով, անկախ այն իրավիճակից, որում նա հայտնվում է, պարտավոր է մնալ զուսպ և հավասարակշռված:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրություններն ու ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշները**:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով,

Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Էդգար Արմենի Հակոբյանի (արտոնագիր՝ թիվ 2177) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 4.1 կետի և 2.2.2 ենթակետի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24182-2-Ա
16 ապրիլի 2025թ.
ք.Երևան